



**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

**Բնապահպանական սուբվենցիաներով իրականացված նախագծերի
վերլուծություն**

Սույն փաստաթուղթը ստեղծվել է Եվրոպական Միության աջակցությամբ՝ «Հգորացման գործընկերներ» ծրագրի շրջանակներում: Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատվությունը ամբողջությամբ կրում է «Խազեր» էկոլոգամշակութային հասարակական կազմակերպությունը, որը ներգրավված է «Հգորացման գործընկերներ» ծրագրում, և ոչ մի դեպքում չի կարող համարվել, որ այն արտացոլում է Եվրոպական Միության տեսակետը:

Օրեցօր զարգացող տնտեսությունը և դրա հետևանքով առաջացող բնապահպանական խնդիրների լուծման անհրաժեշտությունը, ինչպես նաև տնտեսության զարգացման կարևորումը, ստիպեցին տնտեսագետներին, բնապահպաններին և իրավագետներին ստեղծել այնպիսի իրավական և տնտեսական մեխանիզմներ, որոնք ինչ-որ ձևով լուծումներ կտային տնտեսության զարգացման հետևանքով շրջակա միջավայրին ու մարդկանց առողջությանը հասցված վնասը և դրա բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու հարցում:

Հայաստանի Հանրապետությունում բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ապահովելու, ինչպես նաև պետական բյուջեի համալրման համար ֆինանսական ռեսուրսների գեներացիա /դրամական հոսքերի ավելացում/ ապահովելու նպատակով 1999 թվականին ընդունվեց և մինչև 2018 թվականի հունվարի 1-ը գործեց «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» օրենքը: Համաձայն այդ օրենքի 2-րդ հոդվածի.

«Բնապահպանական վճարը՝ բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով պետական բյուջե, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ համայնքի բյուջե վճարվող պարտադիր վճարն է:

Բնօգտագործման վճարը՝ պետական սեփականություն համարվող բնական պաշարների արդյունավետ, համալիր օգտագործման, ինչպես նաև բնական պաշարների օգտագործումը փոխհատուցելու նպատակով այդ պաշարների օգտագործման և (կամ) իրացման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող վճարն է»¹:

¹Տ՝ Ե ս Յ այ աս տան ի Յ ան ր ապե տո լ թ յ ան «Բն ապահ պան ակ ան և բ ն օ գ տ ա գ ո Ր ծ մ ան վ ճ ար ն ե թ ի մ աս ի ն » օ Ր Ե ն ք , 2-ր դ . հ ո դ վ ա ծ ,

Դժվար չէ նկատել, որ բնապահպանական վճարի սահմանումից դուրս է մնացել ազդակիր համայնքի գաղափարը և որպես հետևանք վերոհիշյալից դուրս է մնացել առողջապահական միջոցառումների ֆինանսավորումը:

Բնօգտագործման վճարի սահմանման մեջ ընդգծվում է բնական պաշարների պետական սեփականություն լինելու հանգամանքը և կարևորվում է դրանց «արդյունավետ» օգտագործումը, քանի որ դրանք գանձվում են պետական բյուջե, իսկ բյուջեի կարիքների համար ցանկալի է շատ մուծել և հետևաբար անհրաժեշտ է բնական պաշարները շատ օգտագործել:

Ըստ բնապահպանական վճարի սահմանման պետք է լինեին՝ օրենքով նախատեսված դեպքեր, երբ տնտեսվարող սուբյեկտը բնապահպանական վճարը վճարեր ոչ թե պետական բյուջե այլ հենց համայնքային բյուջե:

Սակայն ո՛չ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» օրենքով, ո՛չ էլ որևէ այլ օրենքով նման կարգ չսահմանվեց:

Տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական վճարները մուծվում էին միայն պետական բյուջե, որտեղից էլ 2001թ-ի մայիսի 15-ին ընդունված և 2002թ-ի հունվարի 1-ից ուժի մեջ մտած՝ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով համապատասխան մասնահանումներ են կատարվում ազդակիր համայնքային բյուջեներին:

Համաձայն վերոհիշյալ օրենքի 1-ին հոդվածի բնապահպանական վճարներից մասնահանումներ ստանում են **միայն ազդակիր համարվող համայնքները**²:

Հայաստանի Հանրապետությունում **ազդակիր համայնքի** եզրույթի սահմանումն առաջին անգամ տրվեց 2014 թվականին ընդունված Հայաստանի Հանրապետության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ ենթակետով.

«ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք»³:

Այս սահմանման մեջ բացակայում է «բնություն» հասկացողությունը, սակայն Մասնահանումները՝ սուբվենցիաները, համայնքներին տրամադրվում են բնապահպանական ծրագրերի իրականացման համար, բայց հետագայում առաջանում են նաև առողջապահական ծրագրեր:

Նշենք, որ ազդակիր համայնքի նման սահմանումը թերի է, քանի որ այդ սահմանումից դուրս են մնում այն բնակավայրերը, որոնք գտնվում են արդեն իսկ գործող հիմնարկների ազդեցության գոտում, ինչի հետևանքով աղտոտվում են դրանց հողերը, օդային ու ջրային ավազանները, բացասական ազդեցության են ենթարկվում բուսական և կենդանական աշխարհները, վտանգվում է այդ համայնքների բնակիչների առողջությունը:

² Տ՝ Ես Հայաստանի Հանրապետության «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» օրենք, հոդված 1

³ Տ՝ Ես Հայաստանի Հանրապետության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենք, 4-րդ հոդված 1-ին մաս, 20-րդ ենթակետ,

2018թ-ի հունվարի 1-ից ուժը կորցրած ճանաչվեց Հայաստանի Հանրապետության «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» օրենքը և դրա փոխարեն սկսեց գործել 2016թ-ի հոկտեմբերի 4-ին ընդունված և 2018թ-ի հունվարի 1-ից ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության նոր հարկային օրենսգիրքը:

Այդ օրենսգրքի բաժին 8-ի գլուխ 30-ի 161-րդ հոդվածը տվեց բնապահպանական հարկի սահմանումը.

«Բնապահպանական հարկը բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով սույն բաժնին համապատասխան պետական բյուջե վճարվող հարկ է»⁴:

«Բնապահպանական վճարից» «բնապահպանական հարկի» անցնելիս օրենսդիրը խմբագրեց և այդ հասկացողության սահմանումից հանեց, թե ո՞ր բյուջե է վճարվելու այդ հարկատեսակը՝ պետական թե՞ համայնքային: Օրենքի այս հոդվածով, նախատեսվել է բնապահպանական հարկի միայն պետական բյուջե գանձելու գաղափարը:

Հայաստանի Հանրապետության նոր հարկային օրենսգրքով «Բնօգտագործման վճար»-ի հասկացողությունը գրեթե մնաց անփոփոխ⁵:

Բնապահպանական հարկից մասնահանումները (այսուհետ՝ Մասնահանում) համայնքներին տրվում են սուբվենցիաների տեսքով:

Համաձայն «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի «բ» ենթակետի. «սուբվենցիան դա համայնքի կողմից իրականացվող առանձին նպատակային ծախսատեսակի (ծրագրի) կատարման համար անհատույց և անվերադարձ կարգով պետական բյուջեից տրվող դրամական միջոցներ են»⁶:

Համաձայն «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի «Բնապահպանական հարկից համայնքների վարչական և ֆոնդային բյուջեներ մուտքագրվող մասնահանումները հանդիսանում են նպատակային միջոցներ և օգտագործվում են տվյալ համայնքների տարածքում **բացառապես բնապահպանական ծրագրերի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման համար**»⁷:

Սակայն հետագայում նույն օրենքում հայտնվում է առողջապահական ծրագրերի բաղադրիչը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրավասու է համայնքից ետ պահանջել, պետական բյուջեից իրենց հատկացված սուբվենցիաները, եթե դրանք համարվեն ոչ նպատակային ծախսված գումարներ: Սուբվենցիաները

⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի բաժին 8, գլուխ 30-ի 161-րդ հոդված

⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի բաժին 10, գլուխ 40-ի 197-րդ հոդված

⁶ Տե՛ս «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 20-րդ հոդվածի 4-րդ մասի «բ» ենթակետ,

⁷ Տե՛ս «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 2-րդ հոդված

տրամադրվում են համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգի:⁸

2004թ-ից մինչ օրս ոչ մի համայնքից դեռևս ետ չի պահանջվել և պետական բյուջե չի վերադարձվել ոչ նպատակային ծախսված սուբվենցիայի տեսքով ստացված գումարներ:

Մասնահանումները համայնքներին կատարվում են այն դեպքում, երբ վերջիններս սահմանված կարգով (համայնքապետարանի աշխատակազմի կողմից մշակված և տվյալ համայնքի ավագանու կողմից հաստատված) լիազոր պետական մարմիններին (Հայաստանի Հանրապետության բնապահպանության և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություններ) համաձայնեցման են ներկայացնում **բնապահպանական և առողջապահական նպատակային ծրագրեր:**

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է, թե որ ծրագրերն են համարվում բնապահպանական և որոնք՝ առողջապահական:⁹

Այդ հոդվածով սահմանված են բազմաթիվ և բազմաբովանդակ բնապահպանական համարվող միջոցառումներ, որոնց բովանդակությունը, իրականացման չափելիությունը շատ վիճելի են և մեր կարծիքով չեն համապատասխանում ժամանակակից պահանջներին և հետևաբար ենթակա են վերանայման: Համայնքների կողմից ներկայացված բնապահպանական ծրագրերի հիման վրա կատարվում են որոշակի աշխատանքներ, որոնց դիմաց համայնքը պետական բյուջեից գումար է ստանում: **Հետևաբար այդ աշխատանքներն օրնքում պետք է ունենան հստակ սահմանումներ, չափելի արդյունքներ ու տեղի չտան տարընթերցումների:**

2002թ-ից մինչև 2004թ-ը Հայաստանի Հանրապետությունում ոչ մի համայնք բնապահպանական սուբվենցիա (բնապահպանական վճարներից մասհանումներ) չի ստացել:

Դրա պատճառը ոչ թե պետության չկամենալը կամ համապատասխան գումարների բացակայությունն էր, այլ ազդակիր համայնքների իրազեկված չլինելը: **Հանրապետության ազդակիր համայնքները տեղյակ չէին իրենց ընձեռնված հնարավորության մասին:**

Այս փաստը մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ մեր համայնքների ղեկավարների իրազեկվածությունը և նրանց կրթական մակարդակը հեռու է բավար լինելուց:

Առաջին համայնքը, որն այս տիպի սուբվենցիա էր ստացել դա Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքն էր: **2004թ-ին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքային բյուջեին հատկացվեց 131 հազար 400 դրամ Մասնահանում:**

⁸ Տ՛ ե ս «Բյ ու ջ ե տ ա յ ի ն հ ա մ ա կ ար գ ի մ ա ս ի ն » Հ ա յ ա ս տ ա ն ի Հ ա ն ռ ա պ ե տ ու թ յ ա ն օ Ր Ե Ն Ք, 20-ր դ հ ո ղ վ ա ծ ի 4-ր դ մ ա ս ի «բ» Ե Ն թ ա կ Ե տ,

⁹ Տ՛ ե ս «Ը ն կ ե թ ու թ յ ու ն ն ե թ ի կ ո ղ մ ի ց վ ճ ար վ ո ղ բ ն ա պ ա հ պ ա ն ա կ ա ն վ ճ ար ն ե թ ի ն պ ա տ ա կ ա յ ի ն օ գ տ ա գ ո Ր ծ մ ա ն մ ա ս ի ն » Հ ա յ ա ս տ ա ն ի Հ ա ն ռ ա պ ե տ ու թ յ ա ն օ Ր Ե Ն Ք, 3-ր դ հ ո ղ վ ա ծ

Այս դեպքում կարևոր չէր, թե ինչ ծրագիր էր ներկայացրել համայնքը, կարևոր էր հենց այն փաստը, որ ազդակիր համայնքին պետական բյուջե գանձված բնապահպանական վճարներից առաջին անգամ Մասնահանում կատարվեց:

Հետագայում էլ դեռ երկար տարիներ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունում համայնքների կողմից ներկայացվող՝ այսպես կոչված «բնապահպանական ծրագրերի բովանդակությանը» շատ «մեղմ» էին մոտենում, քանի որ կարևորվում էր համայնքերի ներգրավվածությունն այս գործընթացին:

Դրա հետևանքով Մասնահանումներով հաճախ ֆինանսավորվել են համայնքների կողմից ներկայացված արմատապես ոչ բնապահպանական ծրագրեր:

Համաձայն Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության պաշտոնական տվյալների, 2016թ-ի դրությամբ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի բնապահպանական ծրագրերի իրականացման համար, պետական բյուջեից համայնքային բյուջե Մասնահանումներ ստանալու իրավունք ունեին Հայաստանի Հանրապետության Լոռու (2 համայնք), Սյունիքի (14 համայնք), Արարատի (1 համայնք), Կոտայքի (1 համայնք), Գեղարքունիքի (1 համայնք) և Արմավիրի (1 համայնք) մարզերի ընդհանուր թվով 19 համայնք և Երևան քաղաքը, սակայն գումար է ստացել ընդամենը 9 համայնք:

2017 թվականին մասնահանումներ ստանալու իրավունք են ունեցել Հայաստանի Հանրապետության Լոռու (10 համայնք), Սյունիքի (10 համայնք), Տավուշի (3 համայնք, 10 բնակավայր) մարզերի ընդհանուր թվով 23 համայնք, սակայն գումար է ստացել ընդամենը 14 համայնք:

2018 թվականին նախատեսվում է, որ Մասնահանումներ կստանան Հայաստանի Հանրապետության Լոռու (2 համայնք), Սյունիքի (14 համայնք), Կոտայքի (3 համայնք), Արարատի (1 համայնք) մարզերի ընդհանուր թվով 20 համայնք:

| N | Տարեթիվ | Մասնահանում ստացող համայնքների թիվը | Ֆինանսավորում ստացած համայնքների թիվը | Մասնահանման ընդհանուր գումարը (հազ. դրամ) |
|----|---------|-------------------------------------|---------------------------------------|---|
| 1. | 2016 | 20 | 9 | 89748.0 |
| 2. | 2017 | 23 | 14 | 137643.9 |
| 3. | 2018 | 20 | 6 | 213291.5 |

Ինչպես տեսնում ենք Մասնահանումներ ստացող համայնքների թիվը տարեց-տարի կրճատվում է և դրա պատճառը ոչ միայն հանրապետությունում ընթացող համայնքների խոշորացման գործընթացն է, այլ նաև համայնքների ղեկավարների ոչ կոմպիտենտ և չնախաձեռնող լինելը, և որպես հետևանք **2018 թվականի համար նախատեսված պետական բյուջեից հատկացվող 323 մլն. դրամ մասնահանումից համայնքների կողմից հայտավորվել է ընդամենը 213 մլն. դրամը:**

Գնահատելով համայնքների կողմից 2004թ-ից մինչև 2015թ-ը ընկած ժամանակահատվածում ներկայացված նպատակային ծրագրերը պարզում ենք, որ դրանց ընդամենը **64,3 % կարելի է համարել բնապահպանական: Եվ հետևաբար նաև Մասնահանումների ծախսումն այս եղանակով նույնպես չի կարելի համարել արդյունավետ:** /Առդիր՝ 1 excel ֆայլ 2 շիթ, 28 թերթ և 1 թերթ /

Այս գնահատումն իրականացվել է վերլուծելով համայնքների կողմից Մասնահանումներ ստանալու նպատակով ներկայացված ծրագրերը: Գնահատվել է, թե դրանց, որ մասը կարելի է իրապես համարել բնապահպանական, իսկ որ մասն ուղղակի ուղղված է համայնքի բարեկարգմանն ու այլ բնույթի խնդիրների լուծմանը:

Բնապահպանական հարկից (նախկին վճարներից) կատարվող մասնահանումների այս քայլն իհարկե առաջադեմ է և տարիների ընթացքում տվեց իր դրական արդյունքները: Ազդակիր համայնքները հասկացան և իրականում որոշակի փոխհտուցումներ ստացան իրենց համայնքների բնապահպանական որոշ խնդիրներ լուծելու համար: Այսօր հակառակ պատկերն է, մյուս համայնքները, որոնք ընդգրկված չեն բնապահպանական սուբվենցիաներ ստացողների ցանկում, ջանում են ապացուցել, որ իրենք ևս հանդիսանում են ազդակիր համայնք և որ պետք է ստանան իրենց բաժին մասնահանումը: Սակայն գումարների չնչին լինելը, տեղական ինքնակառավարման մարմինների ոչ նախաձեռնող լինելը, «բնապահպանական ծրագրեր» հասկացության ոչ հստակ լինելը, ինչպես նաև վերջին տարիներին հանրապետությունում ընթացող համայնքների խոշորացման գործընթացները հանգեցրեցին նրան, որ ամբողջ համակարգն այս տեսքով գործում է ոչ արդյունավետ ու ոլորտում անհրաժեշտ են արմատական փոփոխություններ:

Համաձայն «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի «Ծրագրի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:¹⁰»

Նման ստուգումներ իրականացնելու օրենսդրական հիմքերն ամրագրված են նաև Հայաստանի Հանրապետության «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքի, 4-րդ հոդվածով:

«Բնապահպանական **հսկողություն**՝ պետական կառավարման և **տեղական ինքնակառավարման մարմինների** ու կազմակերպությունների կողմից օրենքով սահմանված կարգով իրականացվող գործառնություններ, որոնք նպատակաուղղված են իրենց ենթակա կառույցների կողմից, կամ իրենց տնօրինության տակ գտնվող տարածքներում, ներառյալ՝ ընդհանուր օգտագործման հողային տարածքներում (փողոցներ, հրապարակներ, զբոսայգիներ և հանրության կողմից օգտագործվող այլ տարածքներ) բնապահպանական օրենսդրության պահանջների կատարմանը»¹¹:

2004թ-ից մինչև 2017թ-ի ապրիլը Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական

¹⁰ Տ՛ ես «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդված,

¹¹ Տ՛ ես Հայաստանի Հանրապետության «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենք, 2005թ.,


պետական տեսչության կողմից, իսկ 2017թ-ի ապրիլից մինչ օրս Բնապահպանական և ընդերքի տեսչական մարմնի¹² կողմից հանրապետության և ոչ մի համայնքում բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ստուգում չի իրականացվել, բնականաբար չեն ստուգվել նաև համայնքների կողմից Մասնահանումների հիման վրա կատարված աշխատանքներն և ծախսված գումարների արդյունավետությունը:

Վերը նշվածից կարելի է եզրակացնել, որ նման եղանակով համայնքներին Մասնահանումներ տրամադրելն արդյունավետ չէ, այդ գումարները հաճախակի ծախսվում են համայնքում ոչ բնապահպանական հարցեր կարգավորելու համար: Հետևաբար անհրաժեշտ է փնտրել համայնքների կողմից այդ գումարների ավելի նպատակային օգտագործման ու արդյունավետ տնօրինման եղանակներ:

«Համայնքների զարգացման մակարդակների բևեռացումից խուսափելու, ինչպես և ֆինանսական աջակցության նպատակներով, պետական բյուջեից համահարթեցման սկզբունքով դրանց տրվում են պաշտոնական տրանսֆերտներ (դոտացիա, սուբվենցիա)¹³»:

Ըստ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պաշտոնական տվյալների.

1995թ-ից մինչև 2015թ-ը համայնքների ստացած դոտացիաների և սուբվենցիաների ծավալները




¹² Տ՛ Ե ս Յ այ աս տան ի Յ ան ր ապե տո լ թ յ ան կ առ ավ ար ո լ թ յ ան 2017թ. ապրիլի 27-ի «Յ այ աս տան ի Յ ան ր ապե տո լ թ յ ան բ ն ապահ պան ո լ թ յ ան ն ախար ար ո լ թ յ ան բ ն ապահ պան ո լ թ յ ան և ը ն դ եր ք ի տե ս չ ա կ ան մ ար մ ի ն ս տե դ ծ ե լ ո լ , Յ այ աս տան ի Յ ան ր ապե տո լ թ յ ան բ ն ապահ պան ո լ թ յ ան ն ախար ար ո լ թ յ ան բ ն ապահ պան ո լ թ յ ան և ը ն դ եր ք ի տե ս չ ա կ ան մ ար մ ի կ ան ո ն ադր ո լ թ յ ո լ ն ը և կ առ ո լ ց վ ա ժ թ ը հ աս տատե լ ո լ , Յ այ աս տան ի Յ ան ր ապե տո լ թ յ ան կ առ ավ ար ո լ թ յ ան 2002 թ. օ գ ո ս տ ո ս ի 8-ի N 1237-Ն, 2008 թ. մ այ ի ս ի 15-ի N 654-Ն, 2004 թ. ապրիլի 14-ի 649-Ն որոշ ո լ մ ն եր ո լ մ փ ո փ խ ո լ թ յ ո լ ն ն եր և լ ր ա գ ո լ մ ն եր կ ա տ ար ե լ ո լ , Յ այ աս տան ի Յ ան ր ապե տո լ թ յ ան կ առ ավ ար ո լ թ յ ան 2002 թ. հ ո լ լ ի ս ի 25-ի N 1149-Ն և 2008 թ. դ ե կ տե մ բ եր ի 11-ի N 1577-Ն որոշ ո լ մ ն եր ո լ ժ ը կ որ ցր ա ծ ճ ան ա չ ե լ ո լ մ աս ի ն » N 445-Ն որոշ ո լ մ

¹³ Տ Ե՛ ս Օր դ յ ան Է . Յ . «Տ Ե դ ա կ ան ի ն ք ն ա կ առ ավ ար մ ան հ ի մ ո լ ն ք ն եր » ք . Եր և ան 2000թ. , է ջ 171

Վերը ներկայացված աղյուսակից պարզ է դառնում, թե համայնքներին տրվող գումարների մեջ ինչ չնչին մաս է կազմում բնապահպանական հարկից կատարվող մասնահանումը:

Համեմատենք նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջե գանձվող բնապահպանական հարկից և բնօգտագործման վճարից համայնքներին տրվող բնապահպանական նպատակային սուբվենցիաների (Մասնահանման) ծավալները (համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պաշտոնական տվյալների):



Ստացվում է, որ համայնքներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից կատարվող Մասնահանումն անհամեմատ չնչին գումար է կազմում, քան այդ հոդվածներով պետական բյուջեի մուտքերը:

Ընդգծենք, որ Մասնահանումը համայնքներին կատարվում է միայն բնապահպանական հարկից: Մինչդեռ բնօգտագործման վճարները շատ ավելի մեծ գումարներ են կազմում: Եվ ավելի արդարացի ու իրավականորեն ճիշտ կլիներ, եթե Մասնահանումները կատարվեին և բնօգտագործման վճարներից և շրջակա միջավայրին հասցված վնասի փոխհատուցման գումարից, վերջինս նույնպես գանձվում է պետական բյուջե:

Հայաստանի անկախության հռչակագրում ամրագրված է, որ «Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները... նրա ժողովրդի սեփականությունն է»¹⁴: Այդ դրույթը վերահաստատված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախաբանում: Սակայն նույն Սահմանադրության 10-րդ հոդվածի 2-րդ կետով «ընդերքը և ջրային ռեսուրսները

¹⁴ Տե՛ս «Հայաստանի անկախության հռչակագիր», 7-րդ կետ, ՀՀԳԽՏ 1990/16

պետության բացառիկ սեփականությունն են¹⁵», ինչն ակնհայտորեն հակասում է Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագրի ու Մահմանադրության նախաբանում վերը նշած դրույթին:

Հետևաբար ընդերքի և ջրային ռեսուրսների, ինչպես նաև բնական այլ ռեսուրսների օգտագործման կամ իրացման համար վճարվող բնօգտագործման վճարները ևս պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության քաղաքացիների բացառիկ սեփականությունը, այլ ոչ թե զանձվեն պետական բյուջե:

Հայաստանի առանց այն էլ սուղ և չվերականգնվող բնական պաշարների օգտակար հանածոների, օգտագործման նման եղանակը, որը սահմանված է այժմյան Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ, կրերի նրան, որ մեր գալիք սերունդներն այլևս չեն ունենա օգտակար հանածոների պաշարներ:

Մասնավոր շահույթի վրա հիմնված պետական համակարգում ներկա սերունդների բարբարոս վերաբերմունքը դեպի բնությունը և օգտակար հանածոները կհանգեցնի բավականին մտահոգիչ հետևանքների:

Սակայն, եթե Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից, քաղաքական կամք դրսևորվի ու բնօգտագործման հարկը և բնապահպանական վճարն ուղղվեն այսպես կոչված «Գալիք սերունդների հիմնադրամ»-ին, ապա մեր երկրի առանց այդ էլ սուղ և սպառվող բնական ռեսուրսների օգտագործումը հնարավոր կլինի վերածել «վերականգնվող ռեսուրս»-ի:

Մարդկության կողմից սպառվող բնական ռեսուրսների անխնա օգտագործումը հանգեցնում է տվյալ հասարակության սննկացմանը: Բնական պաշարների նման օգտագործումն անհետանկար գործընթաց է: Այդ խնդրի լուծում կարող է դառնալ սպառվող բնական ռեսուրսների օգտագործումից ստացված հասույթների ներգրավումը համայնքի բնակիչներին պատկանող շրջանառու ներդրումային հիմնադրամներում: Այդպիսով դրանք կդառնան վերականգնվող ռեսուրսներ և կծառայեն տվյալ հասարակության բարեկեցությանը:

2015թ. սեպտեմբերին աշխարհի ավելի քան 150 երկրների առաջնորդներ մասնակցելով ՄԱԿ-ի Կայուն զարգացման գազաթաժողովին՝ պաշտոնապես ընդունեցին «Կայուն զարգացման» նոր օրակարգ: ՄԱԿ-ի 193 անդամ պետություններ համաձայնության եկան «Վերափոխենք աշխարհը. կայուն զարգացման օրակարգ 2030» փաստաթղթի շուրջ, որի մեջ ներառված էր հռչակագիրը, կայուն զարգացման 17 նպատակներն ու 169 թիրախները: 2016 թվականի հունվարի 1-ից այդ հռչակագիրը պաշտոնապես ուժի մեջ մտավ:

Կայուն զարգացումը, բնորոշվում է որպես զարգացում, որը բավարարում է ներկայի պահանջները՝ առանց վնաս հասցնելու ապագա սերունդներին սեփական կարիքները հոգալու կարողությանը¹⁶:

Մարդկության զարգացման համար ընտրված այս ուղին այլընտրանք չունի՝ հակառակ դեպքում մարդկությունը կկանգնի անդառնալի երևույթների առջև, որոնք կարող են հանգեցնել մարդկության և Երկիր մոլորակի ոչնչացմանը:

¹⁵ Տ՝ Ե ս Զ այ աս տան ի Զ ան ր ապե տո ւ թ յ ան Սահ մ ան ադ ր ո ւ թ յ ան 10-ր դ և ո դ վ ա ժ , 2—ր դ մ սս

¹⁶ Տ Ե՝ ս <https://hy.wikipedia.org/wiki/>

Կայուն զարգացման 17 նպատակներից 3-ը՝ 13, 14 և 15-ը բնապահպանական են, իսկ մյուսներն ուղղված են մարդկության զարգացմանն ու բարեկեցությանը:

*«13. **Ձեռնարկել անհապաղ գործողություններ՝ պայքարելու կլիմայի փոփոխության և դրա ազդեցությունների դեմ,***

14. **Ապահովել օվկիանոսների, ծովերի ու ջրային պաշարների պահպանությունը և կայուն օգտագործումը՝ հանուն կայուն զարգացման,**

15. **Պահպանել, վերականգնել և խթանել ցամաքային էկոհամակարգերի կայուն օգտագործումը, ապահովել անտառների կայուն կառավարումը, պայքարել անապատացման դեմ, դադարեցնել և շրջադարձել հողերի վատթարացումը, կասեցնել կենսաբազմազանության կորուստը»):**

Արձանագրենք մի զարմանալի փաստ. **հանքարդյունաբերությունը Կայուն զարգացման նպատակներից ընդհանրապես դուրս է մնացել:**

Կայուն զարգացման գաղափարի վառ օրինակ կարող է հանդիսանալ ԱՄՆ-ի Ալյասկա նահանգի «Ալյասկայի մշտական հիմնադրամը» (Alaska Permanent Fund)/APF/: «Այն ստեղծվել է որպես բնօգտագործման բնագավառի կառավարման հատուկ ինստիտուտ, որի հիմնական խնդիրը և պատասխանատվությունը կայանում է նրանում, որ պահպանվեն և բազմապատկվեն որոշակի պահուստային միջոցներ, դրանք օգտագործելով հանրային կարիքների, ինչպես նաև ներդրումային նպատակի համար»¹⁷:

Այդ հիմնադրամն ստեղծվեց Ալյասկայի սահմանադրությունում համապատասխան ուղղում մտցնելուց հետո, համաձայն որի Ալյասկայում հայտնաբերված նավթային ռեսուրսներն Ալյասկայի մշտական բնակիչների սեփականությունն է:

APF-ն ունի երկու բաղադրամաս. 1) հիմնական (principal) և 2) եկամտային (income): «Հիմնադրամի հիմնական մասը ներդրվում է տնտեսության բարձր եկամտաբերություն ունեցող ճյուղերի մեջ: Այն նահանգի ղեկավարության կողմից չի կարող ծախսվել առանց համապատասխան հանրաքվեի որոշման, որին պետք է մասնակցեն Ալյասկա նահանգի բոլոր բնակիչները: Եկամտային մասը կարող է ծախսվել նահանգի նահանգապետի և նահանգի օրենսդիր ժողովի որոշման հիման վրա: Այդ որոշումներն ընդունելուց առաջ, դրանք լայնորեն քննարկվում են նահանգի բնակչության հետ, ՋԼՄ-ների, հասարակական և քաղաքական կազմակերպությունների միջոցով»¹⁸:

Միջազգային այս փորձը, ինչը հնարավորություն է տալիս օգտակար հանածոներից ստացված այսօրվա շահույթն օգտագործել գալիք սերունդների բարօրության համար, հնարավոր է կիրառել նաև Հայաստանի Հանրապետությունում, հիմնելով՝ «Գալիք սերունդների» հիմնադրամ կամ **«Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամ»** (այսուհետ՝ Հիմնադրամ):

¹⁷ S' Ես «Опыт штата Аляска в правовом регулировании природопользования (на примере нефтяных ресурсов)», Краснополяский Б.Х, Журнал "Недвижимость и инвестиции. Правовое регулирование", http://dpr.ru/journal/journal_23_20.htm,

¹⁸ S' Ես «Опыт штата Аляска в правовом регулировании природопользования (на примере нефтяных ресурсов)», Краснополяский Б.Х, Журнал "Недвижимость и инвестиции. Правовое регулирование", http://dpr.ru/journal/journal_23_20.htm,

Նման հիմնադրամներ կարելի է ստեղծել նաև Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության հիման վրա՝ մասնավորապես կիրառելով «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համապատասխան դրույթները¹⁹: Բայց ի տարբերություն APF-ի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ստեղծվող հիմնադրամներում չի նախատեսվում կապիտալի առանձին երկու տեսակի առկայություն.

1. անբաժանելի կապիտալ, որը կներառի ներդրումային կապիտալ և շրջանառու ազատ կապիտալ,
2. բաժանելի կապիտալ, շահույթ, ինչը հավասարապես կբաշխվի հիմնադրամի անդամների միջև:

Նույն օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասը հռչակում է, որ «Հիմնադրամների առանձին տեսակների առանձնահատկություններն ու իրավական կարգավիճակը սահմանվում են այլ օրենքներով»²⁰: Այսինքն այս նոր տեսակի՝ «Շրջանառու ներդրումային հիմնադրամ»-ի, որի հիմքում ընկած է ազդակիր համայնքների բնակիչների անօտարելի սեփականության գաղափարը, ստեղծման համար կան անհրաժեշտ և բավարար օրենսդրական հիմքեր: Դրա գործունեության առանձնահատկությունները սահմանող դրույթներն անհրաժեշտ է ներառել նոր յուրահատուկ օրենքում:

Նման հիմնադրամի ստեղծման գաղափարը հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից երեք տարբեր փաստաթղթերով (Հայաստանի Հանրապետություն կառավարության 2013 թ-ի նոյեմբերի 14-ի N47 արձանագրային որոշում²¹ (կետ 4 «Կանաչ ներդրումների սխեմա»-յի օրինակով քաղաքացիական ներդրումային շրջանառու հիմնադրամի ստեղծման վերաբերյալ ՀՀ Կառավարությանը առաջարկությունների ներկայացում), Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թ-ի ապրիլի 25-ի N16 արձանագրային որոշման, հավելվածի 4-րդ կետ²² և 2015 թ-ի սեպտեմբերի 10-ի N41 արձանագրային որոշման հավելվածի 6-րդ կետ²³):

Հիմնադրամում ներառված սեփականության կառավարումը կարելի է հանձնել.

ա) համայնքի բնակիչների կառավարմանը՝ տվյալ համայնքի սահմաններում գործող հիմնադրամ,

բ) պետության կառավարմանը, այսինքն՝ պետությունում գործող հիմնադրամ(այստեղ պետությունը դիտարկվում է՝ որպես հիմնադրամի վարձու կառավարիչ)

գ) մեկ այլ օպերատորի կառավարմանը, այս դեպքում կարող է լինել, թե՛ համայնքային մակարդակի, թե՛ պետական մակարդակի հիմնադրամ:

¹⁹ Տ՝ Ե ս «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,

²⁰ Տ՝ Ե ս «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,

հոդված 1-ին, մաս 3-րդ,

²¹ Տ՝ Ե ս Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թ-ի նոյեմբերի 14-ի N47 արձանագրային որոշում,

²² Տ՝ Ե ս Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թ-ի նոյեմբերի 14-ի N47 արձանագրային որոշման հավելվածի 4-րդ կետ,

²³ Տ՝ Ե ս Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թ-ի սեպտեմբերի 10-ի N41 արձանագրային որոշման հավելվածի 6-րդ կետ,

Ուսումնասիրելով համաշխարհային փորձը (ԱՄՆ, Նորվեգիա, Նիգերիա, ՌԴ) պարզում ենք, որ «այն երկրներում, որտեղ պահպանվում են քաղաքացիների իրավունքները՝ շահույթ ստացող բնական ռեսուրսների օգտագործումից, դիտվում է աղքատության կրճատում, կառավարությունը կուտակված կապիտալը ներդնում է իր ժողովրդի բարեկեցության համար, զարգանում է տեղական տնտեսությունը, կրճատվում է գործազրկությունը, դիտվում է կյանքի մակարդակի համատարած բարձրացում, նախատեսվում են միջոցներ հանրային սեփականության չարաշահումների դեմ»²⁴:

Բնօգտագործման վճարները և բնապահպանական հարկերը պետական բյուջեից ոչ մի դեպքում չպետք է ուղղվեն, կրթական կամ սոցիալական նպատակներին: Դրանք պետք է ուղղվեն միայն ներդրումային շրջանառու հիմնադրամին, որը համապատասխան ներդրումներ իրականացնելով կնպաստի համայնքների զարգացմանն ու դրանց բնապահպանական խնդիրների լուծմանը: *Ընդ որում, քաղաքացին այդ հիմնադրամից գումարի տեսքով կարող է ստանալ միայն իր սեփականություն հանդիսացող բաժնի ներդրումից ստացված շահութաբաժինը:*

Պետական (համահայաստանյան անդամության) մակարդակով ստեղծվող Հիմնադրամում Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացի իր ծննդյան օրվանից կդառնա այդ ներդրումային շրջանառու հիմնադրամի լիարժեք անդամ, իսկ համայնքային մակարդակով ստեղծվող հիմնադրամների անդամ (գործող օրնսդրությամբ՝ շահառու) կարող են դառնալ տվյալ համայնքում մշտական բնակություն ունեցող քաղաքացիները:

Համահայաստանյան մակարդակում ստեղծվող Հիմնադրամի անդամությունը կդադարի Հայաստանում բնակության դադարեցման կամ քաղաքացու մահվան դեպքում, իսկ համայնքային Հիմնադրամի անդամությունը կդադարի համայնքի մշտական բնակությունից հեռանալու կամ մահվան դեպքում:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները կապահովեն նման հիմնադրամի կառավարումը, և՛ դրա անդամության հարցով, և՛ գումարների ներդրումների, դրանցից ստացված շահույթի բաշխումը հիմնադրամի հիմնադիրների միջև հարցերում, այսինքն, թե՛ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, և թե՛ համայնքի մշտական բնակություն ունեցող քաղաքացիների միջև:

Ընդ որում, Հայաստանի յուրաքանչյուր մշտական բնակիչ՝ անկախ սեռից, տարիքից, կրթական մակարդակից, պաշտոնից, սոցիալական դիրքից, ունեցվածքից համահայաստանյան մակարդակով ստեղծվող հիմնադրամում ունենալու է հավասար մասնաբաժին:

Շահույթի բաշխման ու այդ հիմնադրամի կառավարման հարցերում պետք չէ նոր ուղիներ որոնել: Այդ հարցերին վաղուց, այն էլ շատ հաջող, լուծումներ են տրվել: Դրանք մշակված և ներդրված են վերոհիշյալ նմանատիպ հիմնադրամների կառավարման մեջ (օրինակ APF, Նորվեգիա):

²⁴ S՝ Ես <http://inosmi.ru/world/20061219/231763.html>, Ջաբոև Լևոնի Սիխախանե

Հարց է ծագում, իսկ ինչո՞ւ բնօգտագործման վճարները և բնապահպանական հարկերը չպետք է գանձվեն համայնքային բյուջե և այնտեղ ծառայեն համայնքային խնդիրների լուծմանը:

Համայնքի բյուջեն ձևավորվում է համաձայն Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 86-րդ հոդվածի պահանջների: Այդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «դ» ենթակետը հռչակում է, որ համայնքի բյուջեի ձևավորման աղբյուրներից է «բնապահպանական վճարներից մասհանումներ»-ը²⁵:

Նշենք, որ 2018թ-ի հունվարի 1-ից, երբ ուժի մեջ մտավ Հայաստանի Հանրապետության նոր հարկային օրենսգիրքը, «բնապահպանական վճար» հասկացողություն այլևս գոյություն չունի: Անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 86-րդ հոդվածում կիրառվող «բնապահպանական վճար» եզրույթը փոխարինել «բնապահպանական հարկ» եզրույթով²⁶:

Համեմատենք «համայնքային բյուջե» և «շրջանառու ներդրումային հիմնադրամի» ձևավորման, կառավարման և ծախսման առաձևահատկությունները:

| N | Համայնքային բյուջե | Շրջանառու ներդրումային հիմնադրամ |
|----|--|--|
| 1. | Համայնքի բյուջեց չի կարելի ներդրումներ իրականացնել | Ներդրումներ իրականացնելն այս հիմնադրամի գլխավոր նպատակն է |
| 2. | Շահույթ չի կարող ստանալ | Ներդրումները ենթադրում են շահույթի ապահովում |
| 3. | Կառավարող մարմինն է. Համայնքի ղեկավարը և ավագանին | Կառավարող մարմինն է. Համայնքի բնակիչներից ձևավորված Հոգաբարձուների խորհուրդը |
| 4. | Համայնքի բյուջեի և ունեցվածքի տերը ընդամենը /դեյուրե/ են տվյալ համայնքի բնակիչները | Հիմնադրամի միջոցներն իրականում /դեֆակտո/ հանդիսանում են տվյալ համայնքի բնակչի անօտարելի սեփականություն՝ ծնված օրվանից մինչև մահվան օրը, այն ժառանգությամբ չի փոխանցվում մահից հետո, այլ դառնում է հիմնադրամի մաս՝ վերաբաշխվում ու անցնում է համայնքի նոր ծնված անդամներին: |
| 5. | Համայնքի սեփականության (բյուջեի) կառավարմանը համայնքի բնակիչը մասնակցում է 18 տարին լրանալուց հետո, համայնքի ավագանու և համայնքի | Հիմնադրամի կառավարմանը մարդը կարող է մասնակցել իր ծնված օրվանից միայն այն հանգամանքով, որ ունի տվյալ համայնքում մշտական բնակություն: Երեխաները կրում են չափահասների հետ սեփականության |

²⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենք, հոդված 86,

²⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք, հոդված 161

| | |
|--|---|
| <p>ղեկավար ընտրելու և ընտրվելու միջոցով:</p> | <p>նկատմամբ հավասար իրավունք ու կառավարմանը մասնակցում են իրենց խնամակալների միջոցով:</p> |
|--|---|

Սեփականատերը նա չէ, ով կառավարում է բարիքների բաշխումը, այլ նա ում շահերից է բխում դրանց նկատմամբ կառավարումն ու դրանց բաշխումը:

Հետևաբար պետությունը, կամ ՏԻՄ-երը չեն կարող հանդիսանալ բնական պաշարների սեփականատեր, նրանք կարող են հանդիսանալ միայն դրանց կառավարիչը:

Բնության բարիքների նկատմամբ մարդու սեփականության իրավունքը նրա բնական անօտարելի իրավունքն է: Թվում է, թե, հավասար բաժնեմասերով ընդհանուր սեփականությունը նույն համատեղ սեփականությունն է, սակայն իրավունքի տեսակետից դա այդպես չէ. սեփականությունը պետք է կրի անձը (անհատը): Ընդհանուր «համաժողովրդական» սեփականությունը «բոլորինն» ու «ոչ մեկինն» է: Այդպիսին էր սոցիալիստական «անտեր» սեփականությունը:

Քաղաքացիական անօտարելի սեփականությունը, ինչը մարդուն օժտում է իրական սեփականությամբ, չի լինում «բոլորինն» ու «անտեր», այլ դառնում է անհատականացված և անձնավորված, բայց միևնույն ժամանակ՝ անօտարելի:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վերանայել «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, մասնավորապես.

ա) 1-ին հոդվածի առաջին պարբերությունը թվարկում է այն կազմակերպությունների ցանկը, որոնց գործունեությունը թողնում է վնասակար ազդեցություն:

Մեր երկրի անկայուն տնտեսությունը թույլ չի տալիս այդ կազմակերպությունների ցանկը հաստատել օրենքով, քանի որ դրանցից յուրաքանչյուրը, ցանկացած պահին կարող է դադարեցնել իր գործունեությունը, լուծարվել, վերանվանվել և այլն. . . : Հետևաբար ավելի նպատակահարմար կլինի այդ կազմակերպությունների ցանկը հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, ինչը հնարավորություն կընձեռնի ավելի օպերատիվ ու ճկուն կերպով վերջինիս մեջ փոփոխություններ կատարել:

բ) Հստակեցման և պարզեցման կարիք ունի 1-ին հոդվածով նախատեսված Մասնահանումների հաշվարկման կարգը,

գ) խմբագրել 3-րդ հոդվածը, հստակեցնելով դրանում տրված բնապահպանական և առողջապահական ծրագրերի սահմանումը, դարձնելով դրանք չափելի և հստակ:

2. Մասնահանումների օգտագործման նման պրակտիկական փոխարինել դրանք «Շրջանառու ներդրումային հիմնադրամներ» ուղղելով, ինչն ավելի արդունավետ կդարձնի առանց այդ էլ փոքր գումարների օգտագործումը:

3. Պետական քաղաքականության տնտեսական հենք դարձնել «քաղաքացիական անօտարելի սեփականության» գաղափարը և դրա հիման վրա ստեղծել համապատասխան շրջանառու ներդրումային հիմնադրամներ: